


ՏՆՕՐԷՆ-ԽՍՐԱԳԻՐ  
**ԱՐՇԱԼՈՒՎԻՍ**  
 ԿԱՐԱՎ ԿԱՐ ՈՐ ԵՒ Է ԳՐՈՒԹԻՒ  
 ՊԵՏԵ Է ՈՒՂՂԵՒ ԱՌ  
 Խմբագր. ԱՐՇԱԼՈՒՎԻՍ ԼՐԱԳՐԻ  
 ԳԱՀԻՐԷ (Հապոլպոլիտ)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
 ԵԳԻՍՏՈՒ ՀԱՄԱՐ  
 Տարեկան, ողջ դանկն. 60  
 Վեցամսեայ » 35  
 ՕՏԱՐ ԵՐԿՐՆԵՐ  
 Տարեկան ծրակն 20  
 Վեցամսեայ » 12

Rédaction du journal arménien  
**ARCHALOUICE**  
 HABBANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)

**ԼՐԱԳԻՐ**  
**ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ**

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՆԸ ԿԱՆԽԿ Է  
 ԵՒ ԹՂԹԱՍԱԿԻ ԹԱԽԹԸ  
 Խմբագրութեան վրայ :  
 Խմբագրութեան ուղղուած  
 գրութիւնք եւ չ'են սրուիր :

ՎԷ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

**ԺԱՆՏԱԽՏԻ ԴԱՐՄԱՆԸ**

Վերջին ժամանակներս եգիպտոսի ու Բորթոսի մէջ ծագած ժամտախտը երբ մէկ կողմէ կառավարութիւնները առողջապահական խիստ միջոցներու գիմել հարկադրեց, միւս կողմէ անգամ մըն ալ շեշտեց այն յարատե աշխատութիւնը, որ գիտուններու շրջանին մէջ կը կատարուի երկար ժամանակէ ի վեր այդ մեծ սարսափին դարմանը գտնալու համար :

Այս առիթը Զուիցերական թերթերը անգամ մըն ալ կը խօսին իրենց մէկ հայրենակցին, Տօքթօր Եէրսէնի վրայ, որ ասկէ մէկ քանի տարիներ առաջ յաջողեցաւ ժամտախտի միջոցը գտնալ և հիմա այ Բորթօյի մէջ ժամտախտէ վարակուածներու վրայ իր պատուաստի փորձերը կ'ընէ :

Տօքթօր Եէրսէն ծագումով Զուիցերացի է. իր կրթութիւնը առած է Զուիցերիա ու Գերմանիա և յետոյ անցնելով Բարիզ յաջողած է Բասթօրի աշխատանոցը մտնալ : Այս աշխատանոցին մէջ Եէրսէն քիչ ժամանակէն իր յամառ աշխատութիւնովը ամենքէն կը սիրուի. մանաւանդ Տօքթ. Ռուէն որուն գործակիցը եղած է փողացաւի բժշկութեան գործին մէջ : Բայց Եէրսէն չ'էր կրնար երկար մնալ հոն. իր յանդուգն բնաւորութիւնը և մանաւանդ անձնական հետազոտութիւններու տենչը հանդիստ չէին ձգել զինքը և յանկարծ օր մը Եէրսէն Մեասթրաի շոգեհաններէն մէկուն մէջ բժիշկի պաշտօն ստանալով կը մեկնի դէպ ի Սայկօն. այս պաշտօնին մէջ երկուսուսուրդ բժիշկը մեծ փորձառութիւն ձեռք կը բերէ մանաւանդ Հարաւային Ասիայի ծովեզերքին վրայ կատարած ճամբորդութիւններու ժամանակ : Քիչ վերջը այս պաշտօնն ալ կը ձգէ Եէրսէն գաղթականութիւններու մէջ կառավարական բժիշկի պաշտօնը ընդունելու համար : Այս պաշտօնին մէջ գտնելով այն ամէն միջոցները որոնց պէտք ունէր, անմիջապէս ձեռնարկեց երկար ճամբորդութիւններու դէպ ի Աննամի. թօնքինի ու Չինաստանի խորքը սիրած հետազոտութիւնները կատարելու համար : Անշուշտ շատ հեշտ չ'էին այս ճամբորդութիւնները և մէկէ աւելի անգամներ գործ ունեցաւ աւազակներու հետ, որոնք անգամ մըն ալ իր ոտքը կտորեցին զինքը կողպտելու համար : Բայց Եէրսէն

այս ամբողջ նեղութիւնները կը տանէր միշտ աչքը իր գաղափարին վրայ յառած : Այս ճամբորդութիւնները աւարտելով հասաւ Հօնկ-Քօնկ ճիշդ ա'յն ժամանակ երբ ժամտախտը մեծ կտորած կ'ընէր հոն. իր ուղած անցը հասած էր վերջապէս և հոն տեղին վրայ, լաւ մը ուսումնասիրեց այդ հիւանդութիւնը և երկար աշխատութիւններէ ետքը վերջապէս գտաւ այն պղտիկ անատունը, որ մեծ սարսափներ ստեղծելու կարողութիւնը ունէր : Անմիջապէս Բարիզ գարձաւ Եէրսէն և հոն պատրաստեց, հետեւելով իր վարպետներուն, մանաւանդ Տօքթ. Ռուէի մէթոտներուն՝ ժամտախտի չիճուկը և ամէն պատրաստութիւն տեսնելով մեկնեցաւ նորէն և այս անգամ գնաց Աննամ՝ ուր ժամտախտը կը տիրէր. հոն հաստատեց իր աշխատանոցը և իր պատրաստած չիճուկով սկսաւ պատուաստել ժամտախտէ վարակուածները. այս աշխատութիւններուն արդիւնքը՝ որ հաղորդուեցաւ Ֆրանսական ակադեմիային, շատ յաջող էր, նոյն իսկ յուսացուածէն աւելի : Եէրսէնի չիճուկին շնորհիւ 27 վարակուողներէն երկուքը միայն մեռած էին : Այդ ժամանակ ընդհանուր համար համարում գոյացաւ թէ ժամտախտէ վարակուող մը եթէ առաջին քսանըչորս ժամուան շրջանին մէջ Եէրսէնի չիճուկովը պատուաստուի՝ կը բժշկուի : Այդ օրէն իր աշխատութիւնները կը շարունակէ գիտուն բժիշկը և երբ վերջնաւ Բորթօյի մէջ ժամտախտ ծագեցաւ՝ անմիջապէս հոն վազեց իր գիտը կատարելագործելու համար կարգ մը փորձեր ընելու նպատակով : Թեքուս շատ ուշ չէ նոյն օրը որ գիտութիւնը, նոյն իսկ Եէրսէնի բերնով, իր վերջին խօսքը ըսէ ժամտախտին դէմ որ մինչև հիմա այնչափ սարսափներ ստեղծած է ժողովուրդներու :

Բժշկութիւնը արդէն բաւական ժամանակ է որ մտած է չիճուկներու ու պատուաստումներու շրջանին մէջ և այս ուղղութիւնը թերեւս առաջնորդէ նաև գիտունները վնասելու այն չիճուկը որ մարդիկը իրենց ամենամեծ հիւանդութենէն պիտի ազատէր այն է ձեռքութիւնը. այն ալ անշուշտ այն ժամանակ, երբ միւս հիւանդութիւններուն հետ իր հաշիւը կարգադրէ :  
 Տօքթ. Եէրսէն դեռ 36 տարեկան է :  
**ՅՈՒՆՍԷՓԵԱՆ**  
 Յիւրիս, 12 հոկտ. 99

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ**

Ծանօթ հրատարակագիր Իււոպէն Կօհիլէ սոյն վերնագրով Օտոտի 99 հոկտ. 9 թուոյն մէջ յօդուած մը գրած է, յորում Հայաստանի անհանդուրժելի թշուառ կացութեան մասին Եւրոպայի ցոյց տուած դատապարտելի անտարբերութիւնը կը ձաղկէ կծու լեզուով մը :

Մեզ համար միջիթարական է տեսնել որ շահախնդիր Եւրոպայի անկարելիք վեհապետներուն անխիղճ դիւանդակներուն, փարձկան խմբագիրներուն մէջ կը գտնուին տակաւին Իււոպէն Կօհիլէի նման անչափախնդիր, ճշմարտապէս մարդատէր անձնաւորութիւնք, որոնք հայ ժողովրդով կը զբաղին և անոր արդար դատը կը պաշտպանեն :

Նիքօլա Բ. Կայսրը իւր մարդասիրական Յայտարարութիւնը հրատարակ հանած վայրկեանին իսկ ձիւղանտիոյ պէս փոքրիկ ժողովրդի մը ազատութեան և իրաւանցը դէմ մտադրած վատ ձեռնարկը իղլուսի կը հանէր : Լահէյի խաղաղութեան համաժողովին յաջորդ օրը ահա Անգլիա բանակ մը մը զրկէ Պօլսիներուն դէմ առանց կանխաւ իրաւարար Ատուանի դիմելու : Եւ ահա Հայաստանի մէջ ջարդերը վերստին կսկսին. կը ծանուցանեն թէ Մեքասալոյ, Մուշի և Վանի մէջ արդէն արիւնհեղութիւն եղած է :

Եւրոպա այս անգամ ալ արդեօք կարմիր Սուլթանին շահատակութեանցը ձեռնառն պիտի ըլլայ՝ աչքերը անպին դարձնելով և ականջները խցելով. որպէս զի ամբողջ ժողովրդի մը հոգեւարքի աղիտորմ ազգակը չը լսի :

1894 ի ջարդերէն վերջը քաղաքակիրթ ազգերը սա չըմեղանքով ինքզինքնին արդարացնել ուղեցին թէ մեծ մարդասպանին մեղսակից եղող իրենց կառավարութիւններէն և վարձկան մամուլէն խափուած էինք ՚ի Գաղղիա արտաքին գործոց նախարար Հանթօթ անամթաքար սուտ խօսած էր երկար ամիսներ Հանթօթ Սորիզարանին կը հաւատէր թէ Պօլսոյ և Փոքր Ասիոյ մէջ « ամէն ինչ լաւ կընթանար », մինչդեռ իւր թղթագրականին մէջ ունէր հեռագիրներու ծրարներ, որոնք կտորածը կը նախազուշակէին. և որոնք յետոյ եղած ջարդերը կը պատմէին՝ կրակի տրուած զիւղերը և շարաշար սպաննուած հարիւրաւոր քրիստոնեաները մի առ մի թուելով :

Հանթօթ՝ զեպոսին և Ֆրանսական հիւսապատաներուն նամակները և հեռագիրները կարգալէ ու պահելէ ետքը, Սուլթան Համիտի վրայ ներբողալից յօդուածներ կը զրկէր թերթերուն : Կեդտու մամուլին ներկայացուցիչները եղող Ալֆօնս Ումպէնէրը արտաքին գործոց պաշտօնատէրը կընդունէր հրէշային ոճին շուրջը լուրթիւն կազմակերպելու համար էլիւ թերթը իւր առաջին սուտերուն ՚ի վարձատրութիւն՝ Պատուոյ Լէգէոնի խաչ կրտանար. Ժուլուալ Տէ Տէպաի վարիչները քարափներու և փարոսներու առանձնաշնորհումներ կընդունէին, ուրիշներ հնչուն դրամ կըստանային Մեծ մարդասպանին անհատուած հարստութիւնը իրեն թոյլ կուտար առատ տուաւ վարձատրու :



Այդ շինութիւնը որ բոլորովին և միայն  
ցուլամարտին համար շինուած էր, ժամա-  
նակաւոր էր. տախտակներով, փայտերով,  
սիւններով, փայտեայ նստարաններով և ըն-  
Մէկ խօսքով խախուտ, ուստի և անյարմար  
ցուլամարտի:

Ժամը երկուքէն առաջ քսան հազարէ  
աւելի անձինք այնտեղ հաւաքուած էին.  
բացառիկ տարազներ այդ ամբողջին մաս-  
նաւոր փայլ մը կուտային. շատերն առաջին  
անգամն ըլլալով այդ հանդէսին ներկայ կը  
գտնուէին:

Անասուններու պաշտպան ընկերութեան  
անդամներն, որոնք իրենց նախագահին  
բողոքագիր-հրահրանք եկեր էին այդ  
անխիղճ (!) տեսարանին դէմ բողոքելու (")  
համար, շատ քիչ էին թուով. ուստի ո՛ր և է  
խառնակութիւն անսպասելի էր:

Ժամը 2 ու կէսին հանդէսին կազմա-  
կերպիչներն կրկէսին մէջ իրենց մասնաւոր  
տեղերը բազմեցան և Օրֆէսը մը սկսաւ  
Գարմենէն էն և Թրուշէր էն կատրներ ածել:

Ժամը ճիշտ երեքին բացուեցան կրկէ-  
սին դռներն և ճամբայ արուեցաւ Թոռէա-  
տոններուն, որոնք եկան բարեկեցին ամբողջին  
և նախագահն. Քանի մը վայրկեան յետոյ  
ցուլը մտցուցին կրկէսին մէջ, այսինքն դուռ  
մը բացուեցաւ ուրկէ ցուլը կրկէսին մէջ  
յատեցայ ահուկի գազանի մը նման. անմի-  
շապէս Թոռէատոնն ժէռէրիթօ մենամարան  
սկսաւ ցուլին վրայ յարձակելով, բայց . . .  
կ'երեկայ թէ անանխորք բնաւ միտք չ'ունէր  
կուռելու և փոխանակ պատասխանելու՝ ագին  
դարձուց զինքը գրգռողին և հեռացաւ:  
Թոռէատոնը կրկին փորձեց . . . բայց ա-  
նօգուտ:

Վերջապէս ցուլը բարկացած կրկէսի  
պատէն դուրս ցատկեց և իւր բոլոր ուժովն  
սկսաւ դաշտերու մէջ վազել . . . :

Սարսափը, աղմուկն ու ժխորը աննկա-  
րագրելի է. իրարանցումի, հրմշտուքի ժա-  
մանակ 10—12 հոգի վիրաւորուեցան, որոնք  
անմիջապէս պէտք եղած խնամքն ստացան  
այնտեղ սպասող բժիշկներէն:

Գանք ցուլին որ գեռ դաշտին մէջ կը  
վազէր, առջևն ելլող ամեն ինչ կործանելով,  
խորտակելով: Ոստիկաններ և զինուորայն  
ետեէն կ'իյնան և շատ վազելէն յետոյ  
վերջապէս ատրճանակներով կ'սպաննեն  
զայն:

Հանդէսը յառաջիկայ կիւրակէ օրուան  
յետաձգուած է, որպէս զի կարինան կրկէսն  
քիչ մը աւելի հաստատ հիմանց վրայ դնել:  
A. SAISSY

— Զօրավար Ուայթ հեռագրաւ կ'ի-  
մացնէ թէ Լատիսիթ վերագարձած է

(\*) Անասուններուն եղած զրկանաց դէմ բո-  
ղոքելու համար կազմուած Անասնապաշտպան  
ընկերութեան նպատակը արդարեւ շատ գովելի է,  
և երանի՛ անոր, որ այդ տեսակ գաղափարը յղա-  
նալու փառքն ունեցած է: Կարելի չէ՞ յուսալ որ  
այդ հոգակեալ բարեփոխները կազմէին ուրիշ  
ընկերութիւն մ'ալ, որուն նպատակը ըլլար բողո-  
քել և պաշտպանել բանական էակներուն սպառ-  
նացող ջնջումին դէմ. երեւի թէ այդ ընկերու-  
թիւնը իւր քիթէն անգին բան մը չ'տեսներ . . .  
ն.

առանց Պօէրնի: ր առ ինքն ճգեղ յաջողելու,  
և թէ՛ ո՛ր և է պատերազմ՝ ա՛ զի չէ ունե-  
ցած այդ կողմը:

ԹՐԱՆՍՎԱԼԻ ՈՍԿԵՐԵՐ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

Թրանսվալի ոսկերէր հարստութիւնը  
առասպելական է: Այդ երկիրը 1888 էն  
մինչև 1897 ի վերջը արտադրած է շուրջ  
մէկ միլիառ 400 միլիոն ոսկի գահեկան, որ  
133 միլիառ ֆրանք կարժէ: Այս վերջին  
կէտը բաւական է, կարծենք, բացատրելու  
Անգղիոյ զոչաքաղ ցանկութիւնը և այն կա-  
րիւրութիւնը զոր Եւրոպա կ'ընծայէ ներկայ  
կնճռատութեան լուծման և Պօէրնիներուն ալ  
վայելած համակրանքը, որոնք զրեթէ պարէ  
մը ՚ի վեր կը կուռին իրենց անկախութեան  
պահպանման համար:

Թ. Ղ. Թ. Ա. Կ. Յ. Ո. Ի. Թ. Ի. Ե. Ն. Ե. Ր

Գահիրէ, 20 Հոկտ. 1899

. . . Խմբագիր,

Եթէ ընտելեան ստեղծագործութեանը մէջ  
զանազանութիւններ չ'լինէր, եթէ արարչագործու-  
թեան գերագոյն վարպետը միւր ա՛րած աշխարհին  
այս ձևն ու գոյնը տուած չ'լինէր, եթէ գիշերը  
միշտ գիշեր մնար ու չարը առանց բարոյն, անու-  
բանալի էր թէ կեանքը աւելի ևս ազդեկալի  
պիտի լինէր: Մարդիկ երկար ապրելու այսքան  
բազմաք չ'պիտի ունենային եւ վերջապէս մարդ-  
կային յոյսը իրեն նեղ միջավայրին մէջ ամեն օր  
նորածագ արեւու մը նմանելու մարմաջէն չ'պիտի  
բռնուէր:

Մարդոց անսահման մտածումին, իտէալներուն,  
ինքնաբուզի կրքերուն կամ ազնուութեանը միտ-  
թարութիւն մէ տեսնելով է ինչպէս խաւարը լոյսին  
առջեւէն կը չքանայ, ազիտութիւնը գիտութեան  
զօրութեամբ կը յաղթահարի, չարը բարոյն առ-  
ջեւէն խոյս կուտայ և սուտը ճշմարտութեան  
յայտնութեամբ կը նսեմանայ. ահաւասիկ հո՛ն է,  
որ մարդկային բարի նախանձը իրեն սպասած  
գոհունակութիւնը կը գտնէ:

Շիտակը խոտովանելու համար «Արշալոյսի»  
երեւուածն յետոյ, որ ա՛յնչպի անաչաւ կը գտնուի  
իր ստանձնած պաշտօնին մէջ, Գահիրէի հայութեան  
ստուար մեծա խանութիւնը անձանթ մնացած շատ  
մը խնդիրներ իրենց զանազան գոյներովը երեւան  
կ'ուզան և յայտնի է թէ հետզհետէ ուրիշ՝ եր ալ  
պիտի գան. ստիճում պատճառելու չա՛յն զիմակա-  
ւորներուն որոնք այժմէն իսկ, ինչպէս կը տեսնենք,  
իրենց կարծեցեալ փառացը սնանկութիւնը կ'ողբան  
գաֆէ շանքան նեթու կամ էթորսո ներու մէկ  
անկիւնը մութի մէջ կ'ծկած. դեւային ծիծաղներ  
նետկողով ալ ու ձախ . . . :

Բնական է թէ երբ թերթ մը այս ինչ կամ  
այն ինչ խնդրով կը դառնի, անոր անմիջական ար-  
դեւնքը չ'երեւար. սակայն սա անուրանալի է թէ  
անոր տարածել ուզած սկզբունքները հետզհետէ  
կ'արմատանան մտքերու մէջ և օր մը ամբարտեած  
հրաբուխի մը նման կը պայթին ու իրականու-  
թիւնը երեւան կը բերեն:

Ահաւասիկ «չ'իշուի» ի սկզբունքը, տեսէ՛ք  
ինչն'ը կը ծնի. ժողովրդական իրաւասութեան  
հարց մը, որ ց'արդ Գահիրէի մէջ անտես եղած  
էր կամայականութեանց գոհուելով: Հիմակ ժողո-  
վուրը իրեն իրաւունքներուն զիտակցութիւնը  
ուսնեալ և իրաւանցը տիրել կ'ուզէ:

Ահաւասիկ Լաբան-Ընթերցատուն ընկերու-  
թեան գիմն. մեկը Մանկապարտէզ-վարժարանին  
իրենց տրամադրութեան տակ գրուելու արտօնու-  
թիւնը ստանալու համար և մերժուելը խաւարա-  
միտներու կամ լաւ ևս է ըսել յետադիմականու-  
րու կողմէ: Ուրկէ կը ծագի դարձեալ ժողովրդական  
իրաւանց գոյութիւնը և պաշտպանելու հզօր արա-  
մագրութիւնը: Կրտայնք մտածել թէ Լաբան-  
Ընթերցատուն գումարումը մանկապարտէզ վար-

ժարանին մէջ, կրնայ ո՛ր և է վնաս պատճառել  
չէն յին և կարասեաց:

Ժողովուրդ մը իր գոյութեան ապացոյցները  
պէտք է որ տայ և Գահիրէն մեծ յոյս ունիմ թէ  
պիտի տայ ուշ կամ կանուխ:

Հայ ժողովուրդը պէտք է որ յաջողող Դարուն  
համարատու լինի. և իրաւացի հիմքու վրայ  
կարգադրուած հաշուեցուցակով ու տեղեկագրով  
մը ներկայանայ համարատուին (1900 ին) :

Մի ուրիշ ճշմարտութիւն ալ ստույթեան քօղին  
տակ պարփակուած զարմանալի չէ՞ք գտնել.  
«Արշալոյսի» 23 թ Թուոյն մէջ Փ. Հապէշեան  
ստորագրութեամբ Որբասիրաց Ընկերութեան առ-  
ժամեայ ժողովականներուն դէմ ուղղուած լուրջըրը

Ես շատ հետաքրքիր եմ այս տեսակ խնդր-  
ներու խորը թափանցել. լսածիս նայելով յօղու-  
ծագիրը յիշեալ ընկերութեան Գործադիր ժողովոյ  
անդամ է եղեր Երբ միջադէպ մը շատ ծանր կը  
նստի այդ ընկերութեան Ընդհ. ժողովոյ Ատենա-  
պետի ստամբսին, կ'ստիպուի իր հրաժարականը  
տալ, որուն համար գասայրք զինուոր անուամբ  
կը միլիտուի «Արշալոյս» ի մէջ: Յօդուածագիրն  
ալ հաճոյակատարութեան տիպար, հրաժարելու  
հրահանգը կ'ստանայ Ատենապետէն ու այնպէս  
կ'ընէ առանց ոչ ոքի ծանօթ կամ յայտնի պատ-  
ճառի:

Այն ատեն դեռ Որբասիրաց Ընկերութեան  
անդամակցողներու թիւը կը հասնի եղեր 23—25  
իսկ այժմ 75—100 ի և գեռ նոր կը զարթու-  
Քրիտատակորոյս Ղալաբոսը օրէնքը յիշեցնելու  
համար Գործ. ժողովին, որ իր յայտարարութեամբն  
իսկ կը յայտնէ արդէն թէ մէկ ամիսէն Ընդհ. ժողով  
գումարելով հարկ եղածը պիտի գործադրէ:

Յօդուածը usruպրոդիւն ուրիշ բան չէնք կա-  
րող ըսել, բայց եթէ ճշգրտագրութեան քօղին տակ  
մտած պարզ խորհրդառու մը . . . :

Յօդուածագիրը քանի որ գիտէ եղեր թէ ի գը-  
լուս հանելու պարտականութիւններ կան, ինչո՞ւ  
հրաժարած է, երրորդի մը խորհրդոցը անսալով,  
ուր ամենէն դատապարտելի նկարագիրը ունենալը  
կը հաստատուի:

Գանք այժմ հարցնելու թէ «գծուած օրէնք-  
ները գործադրեն» ըսելով ի՞նչ հասկցուեալ կ'ուզէ:

Պէտք է մտածել թէ՛ օրէնք մը ընդհանուրի  
հաւանութեամբ պէտք է արժանանայ թէ կամա-  
յակատարներուն: Կամ, օրէնք մը ընդհանուրի՞  
սեփականութիւնը պէտք է ընդունի թէ չէ՞ քանի  
մը փառասէրներու, յաւակնոտ հպարտներու ծայ-  
րայիղ մոլեռանգութիւններուն:

Մարդ շիտակը խօսելով կը նողկայ հանրային  
գործոց համար գիմում ընտրները քաջալերել,  
ոյովհետեւ կան մարդիկ՝ ընդ որս և Հապէշեան  
որ իրենց ըրածին կամ խօսածին իմաստն անգամ  
ըմբռնելու կարողութիւնը չ'ունին և այնպէս  
կ'ուզեն ճանչցուեալ թէ լաւ բան մը ընելու հե-  
տամուտ են:

Աւելի ազնիւ և ուղղամիտ պիտի ընդունէինք  
զինք, երբ գոնէ որբերու գործին մէջ իր ետեւը  
կծկուող նեղամիտ բայց երկչոտ իւշ պաշին  
(ծնպաշին տեղ գործածուած) հրահանգները հմուտ  
զօրավարի մը պատգամները չ'կարծէր և չ'հետեւէր:  
Իմ փափաքս է որ ամեն մարդ իր սեփական  
նկարագիրը ու կորովը ունենայ, որոնք աւելի կը  
գնահատուին հանրային գործերու մէջ:

Կ'ստաջարկեմ որ միանգամ ընդ միշտ վերջ  
մը գնելու համար Գահիրէի գաղութին անվերջա-  
նալի բողոքներուն, և օթն հոգիէ բաղկացեալ  
անկախ ժողով մը կազմուի, որ իրաւարարութիւն  
գոյացնելով բողոքարկուներուն մէջ կըրակացու-  
թիւնը միայն հրատարակէ «Արշալոյս» ի միջոցաւ,  
ապա թէ ոչ անտույլ բողոքները թերթին սիւ-  
նակները պիտի գրուեն և արդիւր ըլլան աւելի  
օգտակար նիւթերու պարտականութեան:

Բայց երբ այս առաջարկած իրաւարար ա-  
տիանն ալ կազմուած տեսնենք, այն ատեն ո՞ր  
պիտի մնան և ի՞նչ պիտի ընեն կեղծիքի, ստու-  
թեան և խաբէութեան զիմակին տակ սպաստա-  
նողները:

Է՛հ, ի՞նչ ընեմ անամալի չէ՞ մի որ ճշմար-  
տութիւնը միշտ ճակատարաց երեւան կելլէ:

ԱՍՏՂԻԿ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԻՈՐ ԴԱՍԵՐ  
ՉԱՓԱՀԱՍՆԵՐՈՒ ՀԱՍԱՐ

ՀԱՅ ԱԻԵՏԱՐ. ՎԱՐՓԱՐԱՆԻՆ ՄԷՋ  
Ի ՏԱՊԱՆՏԻՅԷ

Առաջիկայ նոյեմբեր ամսոյ Յէն սկսեալ  
երեկոյները ժամը 7էն մինչև 9 1/2 պիտի  
աւանդուին Անդր. Գաղղ. Արարելէն և Հա-  
յերէն դասեր:

Դիվել առ Մ. Յ. ԳնԱՃԵԱՆ Հիմնադիր-  
Տնօրէն ձայրԱւետարանական վարժարանաց:

ՀԱՅՎԱԶԵԱՆ ՓՈՒՈՒ

Յոռօքի Պափ վանաւասան մօտեր, Կամե-էլ-Պեհաթի  
ճիւղի դիմացը

ԵԿԱԻՅԵ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին յայտարարելու թէ, վերջերս  
իրենց նոր բացած փուփոխ մէջ, անխարդախ ա-  
լիւրէ կը պատրաստուի ԳԱՂԴԻՍԿԱՆ, ԱՆԳՂԻՍ-  
ԿԱՆ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ հացեր: Սուր-  
ճի, թէյի և կաթի պարսիմաններ, և այլն:

Յկաւօֆ և Ընկերութիւն մեծ ջանք և  
հոգածութիւն պիտի ունենան իրենց զիմող բոլոր  
յաճախորդներն ըստ ամենայնի գոհացնելու:

Յանձնարարութիւնք ամենայն ճշգրտութեամբ  
և փութով կը կատարուին: 8-50

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐՁՊԱՆԵԱՆ

ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻՉ

Իւր գործատեղին հաստատած է Ապ-  
տինի պալատին ճիշդ շինարարի փողոցը, Շա-  
րա-էլ-Պօսթան թիւ 7 տան մէջ:

Ամենէն զժուարահաններն անգամ գո-  
հացնելու պայմանաւ կ'արդուկէ շապիկներ  
և այն ամեն զգեստեղէններն, որոց համար  
արդուկի պէտքը կ'զգացուի:

Ասոնցմէ զատ ունի նաեւ լուացարա-  
րութեան յատուկ ճիւղ մը, ուր՝ իրեն գի-  
մող յաճախորդներուն ճերմակեղէններն  
զատ զատ լուալու գովելի գրութիւնը հաս-  
տատած է:

Յաճախորդներուն դիւրութիւն ընծա-  
յելու նպատակաւ ճերմակեղէններն ինք  
անձամբ պիտի առնէ տուներէն և պիտի  
վերադարձունէ որոշեալ ժամանակին:

ԳԻՆԵՐԸ ՉԱՓԱԻՈՐ ԵՒ ԴԻՐԱՄԱՏՉԵԼԻ  
3-8

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ

ՄԱՆԿԱԲԱՐՉ

Վկայեալ տեղական կառավարութեան և  
բժշկական վարժարանէն

Իւր բնակութիւնը հաստատած է ի Շարա  
Ապտիւլ-Աղիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին  
դիմաց:

Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկու-  
թեամբ ստացած փորձառութիւնը և տեղական  
կլիմայի պահանջներուն մասին ունեցած գիտակ-  
ցութիւնը կարեւոր առաւելութիւններ են:

Իրեն զիմողները կատարելապէս գոհ պիտի  
մնան: 11-24

ԼԵԻՈՆ ԿԻՄԻՏԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

ՅՕՆՕԿՐԱԾ

Գ.Ա.ՀԻՐԷ, - Մուտի փողոց, - Գ.Ա.ՀԻՐԷ  
Ս. և Ս. Սեհնավիի վանաւասան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ  
կը գտնուի պատի և բոնուսի ընտիր տե-  
սակէ բանտիւններու մեծ միւլերք:

ԴԻՄԵՑԷՒ ՀՈՆ և պիտի դանէք ամէն ճա-  
շակի յարմար զանազան տեսակ արանց և կա-  
նանց ժամացոյցներ, աղամանդազարդ, ոսկի, ար-  
ձաք և ցիգի:

Յրանաական և ամերիկեան ապրանքային ամե-  
նարժեք տեսակներէն զարդեղէններ, շրթաներ,  
օղբեր, մասանիներ և այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն  
կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն  
ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ՉԱՓԱԻՈՐ

24-50

ՏՕՐՓԷՕՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄԱՐՈՅԺ

Ապսին, Շարե Գուպի, թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հա-  
սակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ  
ակռաններ:

Կը դադրեցնէ վայրկեանապէս ակռայի ցա-  
ւերը ամերիկեան նորագոյն մեթոսով իւր  
պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տե-  
սակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակռաններուն տոկոսնու-  
թիւնն առ նուազն երկու տարուան համար  
կ'երաշխաւորէ: 3 3-10

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ

ԱՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ ԱՊՏԻՆ

Տայրեի Սանիթի ճիւղի դիմաց

Ամենաընտիր ապրանքներէ կը պատրաստէ  
խիտ կոկիկ, հաստատուն և ճաշակաւոր կոշիկ-  
ներ, արանց, կանանց և տղայոց համար:

Գիները չափաւոր և աժան:  
Փորձ մը միայնը բաւէ: 16-24

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ի Գ.Ա.ՀԻՐԷ

ՇԱՐԱ ՄՕՉԱՄԷՏ ԱԼԻ (ՉԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր  
առաւօտեան ժամը 7 էն մինչև երեկոյեան ժամը 8ը, պիտի գտնուի իւր  
Տպարանին մէջ և պիտի ընդունի ամէն լեզուէ սովորական ամեն կարգի և  
տեսակի յանձնարարութիւններ: Ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահագրեր, Հրախրագրեր, Այցեխարտեր, Յանկեր,  
Գիրքեր, Տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմարներ, Ընկերութեանց և  
վաճառականներու սպագրական ամեն պիտոյցներ:

Իւր սպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոս-  
տանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մաքրութեան,  
ճշգրտակամութեան և գներու չափաւորութեան մէջ:

Եզրպատուի ո և է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները  
ամենայն խնամօք և փութով կը կատարուին:

Տպագրութիւն Ա. Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ

Le Gérant Dr S. A. HAQOPIAN

ԳՐԻՓՈՐ ՊԵՇԻՐԵԱՆ

ԿՈՇԿԱԿԱՐ

Պազար Մուրուր Թիւ 39

Պատիւ ունի ծանուցանել թէ, իւր խանութը  
Շարա Միւզէյինէն փոխադրած է ի Պազար Մու-  
րուր Յրանաական նորաձեւութեանց յար և նը-  
ման կոշիկներ պատրաստելու մէջ իւր ունեցած  
հմտութեամբ մինչև ցարդ գոհ ըրած է իրեն զի-  
մող Պատ. յաճախորդներն:

Իւր գործածած ապրանքներու տոկոսնու-  
թիւնն երբէք տարակոյս չ'վերցնելու:

Իրեն եղած յանձնարարութիւնք ո'չ միայն  
չափաւոր գներով, այլ և փութով և մեծ խնա-  
մով կը պատրաստուին:

Դիմեցէք, եթէ կ'ուզէք ճաշակաւոր հագնել  
և կոշտերէ (նարբ) ազատ մնալ: 19-24

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐԻԷ, ՎԷՔԱԼԷԹ-ԷԼ-ԱՍՄԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ  
(բաստըզ) սև, շագանակագոյն և ոսկեգոյն:  
Սեւ ներկ շիշով վայրկեանապէս սեւցնող:  
Սոյն ներկերու տեսողութիւնը մէկ ու կէս  
ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադրեցնէ և մա-  
զերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տաղ)-  
գլուխները մաղ կը բերէ: 17 տարուան ճա-  
ղատ գլուխներու վրայ փորձուած և հիւ-  
նայի արդիւնք տեսնուած է: Շիշը 8 զըշ-  
ողջ (2 ֆրանք):

Ճերմկցնող շուր շիշով, որը մարմնոյն  
բնական սպիտակութիւն կուտայ առանց  
զգացնելու: Եզրպատուի մէջ միակը:

Ակռայի փոշի և շուր. մին մաքուր և  
ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ  
պահող և ամրացնող:

Թող փութան օգտուել այն անձինք՝ ո-  
րոնց գլխու մազերն սկսած են տակաւ առ  
տակաւ թափել և օր մը ճաղատ ըլլալու  
վտանգին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք և կը փոխա-  
նակենք բոլոր ազգաց գործածած նամա-  
կադրոյցները: 3 4-8